

ԿՐԿԻՆ ՍԵՆ-ՇԱՊԵԼԻ ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Տ: Մարությանի հողվածն առաքին անգամ տպագրվում է մեր ամսագրում՝ կրճատումներով:

Որեւէ հուշարձանի վերակազմություն նախագծելիս նախ ուսումնասիրվում են պեղումներով բացված բոլոր մնացորդները, այնուհետեւ արձանագրությունները, մանրակերտը, եթե բախտի բերմամբ այդպիսին եղել է, նաեւ նույն ժամանակներում կառուցված նույնատիպ հուշարձանները, գրավոր նկարագրությունները, նկարչության եւ մանրանկարչության, քանդակագործության եւ կիրառական արվեստի գործերը, որոնք այս կամ այն չափով, ուղղակի կամ անուղղակի առնչվում են տվյալ հուշարձանի հետ:


Այս առումով Ջվարթնոցի վերակազմության համար մյուս նյութերի շարքում կարեւոր տեղ են գրավում այն երեք հարթաքանդակները, որոնց մասին խոսվելու է ստորեւ: Փարիզի Աստվածամոր տաճարի դիմաց կանգնած է 1243-1248 թվականներին կառուցված Սեն-Շապել եկեղեցին: Այդ եկեղեցու երկրորդ հարկի բաց սյունաս-

րահում, աղոթարահի գլխավոր մուտքի ձախ քարակոփ պատին պահպանվել է բենատիկ հարթաքանդակների մի շարք՝ աստվածաբանական-դիցաբանական բովանդակությամբ: Այդ քանդակներից մեկի վրա պատկերված է Նոյյան տապանի շինարարությունը, պատկերի աջ կողմում, գետնի վրա երեւում է եկեղեցական մի շենք: Հաջորդ քանդակում արդեն պատրաստ Նոյյան տապանն է, վերահաս ջրհեղեղից խուսափող զանազան կենդանիներ թեք տախտակամածի վրայով բարձրանում են նավը, ուր նախօրոք տեղ են գրավել մարդիկ՝ չորս հոգի: Այն եկեղեցական շենքը, որ նախորդ քանդակում գետնի վրա էր, այժմ տապանի վրա է: Քանդակներից երրորդում պատկերված է հեղեղված աշխարհը, ջրերի վրա միայնակ Նոյյան տապանն է, որ տանում է մարդկանց ու եկեղեցական շենքը: Պատկերի աջակողմյան մասում, որտեղ եղանակը պարզվել է, նրանց մոտենում է թեւատարած մի աղավնի, կտուցում շյուղ, որպես մոտակա ցամաքի նշան:

Հիշյալ քանդակների մոր մեկնաբանմամբ պարզորոշ ասվում է. 1. Նոյյան տապանի վրայի եկեղեցական շինությունը Ջվարթնոց տաճարի վերապատկերումն է, 2. այդ քանդակները կատարվել են տաճարի կառուցմանը զուգընթաց, 3. վերոհիշյալ պատկերների քանդակողը պետք է որ հայ եղած լինի, այն վարպետ-ճարտարապետներից մեկը, որը եվրոպա է հասել նույն ճանապարհներով, որով անցել-տարածվել է քրիստոնեությունը, 4. նկատի ունենալով, որ Ջվարթնոցը կործանվել է Սեն-Շապելի կառուցումից մոտ 250 տարի առաջ, քանդակողը, տեսած չլինելով այդ տաճարը կանգուն վիճակում, պետք է ծանոթ լիներ նրա պատկերին կամ մանրակերտին, 5. ի վերջո, հիշյալ քանդակապատկերներն ասում են, որ Ջվարթնոցը եղել է եռաստիճան, եւ որ բոլոր աստիճանների հիմքում ունեցել է բլուրակ ձեւ, այսինքն՝ այնպես, ինչպես 1904թ. պատկերել է իր վերակազմության նախագծում մեծ գիտնական եւ հայրենասեր ճարտարապետ Թորոս Թորամանյանը:







Անցած քսան տարիների ընթացքում, Ջվարթնոցի թորամանյանական վերակազմության քննարկումներին զուգընթաց, շարունակաբար արժարժվում են նաև այս քանդակների եւ Ջվարթնոցի ու զվարթնոցանման տաճարների առնչությունները:

Սեն-Շապելի հարթաքանդակների շուրջը ցարդ շարունակվող բանավեճերում անհարկի քննության ոլորտ են ներքաշվում երբեմն անկարելու կողմեր՝ մինչեւ վերջ չբացահայտելով հարցի հիմնական էությունը: Այժմ կարելու է այն է, որ Փարիզի Սեն-Շապել եկեղեցուն պահպանվում են որմնաքանդակներ, որոնք անվիճելիորեն հանդիսանում են Ջվարթնոցի կամ Ջվարթնոցը կրկնող տաճարներից որեւէ մեկի վերարտադրությունը: Աշխարհում չկա մի ուրիշ շինություն, որն իր արտաքին արտահայտչապատկերով այնպես նմանվեր մի կողմից հիշյալ քանդակներում պատկերված շինությանը, մյուս կողմից՝ Ջվարթնոցին, Գազկաշենին ու մասամբ Բանակին: Միայն սրանք են, որ նույնական են:



Եթե այլ ասպարեզներում «արտաքին, զուտ ծեւական նմանությունը» հնարավոր է, որ անկարելու լինի, ապա ճարտարապետական արվեստի կոթողների ոճական, կոմպոզիցիոն հորինվածքի եւ այլ կողմեր բնորոշելու համար արտաքին, զուտ ծեւական նմանությունն ունի առաջնակարգ, նույնիսկ վճռական նշանակություն, եւ այդ իրական երեւույթը ոչ թե պիտի արհամարիվի, այլ՝ ըստ ամենայնի գնահատվի, եւ հենց դրա հիման վրա էլ «հեռու գնացող եզրակացություններ» կայացվեն:

Պ. Դոնաբեդյանը, ծանոթանալով գրականության մեջ հանդիպող Սեն-Շապել եկեղեցուն վերաբերող նյութերին, հիշեցնում է, որ «1793թ. նոր կառավարության հրամանով քանդվեցին տաճարի վրա գտնվող, ֆեոդալիզմի եւ միապետության հետ առնչվող բոլոր նշանները (իսկ դրանց մեծ մասը գտնվում էր արեւմտյան շքամուտքի վրա)»: Նա նաև գրում է, որ «1630թ. մեծ հրդեհից հետո տաճարի ծածկը փլվեց, եւ երկրորդ հարկը վնասվեց»: Ի վերջո, որպես կարելուր մտահանգում, գրում է. «Համենայն դեպս, շքամուտքի գետնախարխիլի վիճակին վերաբերող գրվածքներում հաստատված է, որ սկզբնական քանդակներից գրեթե ոչ մի բան չէր մնացել 1793թ. հետո»:

Եթե իրոք անցյալ դարում վերականգնելիս հայտնի չի եղել սկզբնապես գոյություն ունեցած քանդակների ինչ լինելը, ապա անհիմն է նաև պնդելը, թե նորը սկզբնականի կրկնությունը չէ: Այդ մեզ հայտնի չէ: Միանգամայն հնարավոր է, որ թե հինը, թե նորը նույն նախորինակի պատճենները եղած լինեն:

Ըստ Պ. Դոնաբեդյանի, Սեն-Շապելի Նոյյան տապանի եռաստիճան շինությունը հանդիսանում է «... երուսաղեմի Քրիստոսի գերեզմանի խորհրդանշական պատկերը՝ ռոտոնդածե, եռահարկ կառուցվածքի ձևով»: Ըստ Ստ. Մնացականյանի՝ այդ «... բարձրաքանդակը կազմում է ֆրանսիական զարդարվեստի օրգանական մասը ...»: Նա նաև գրում է. «Նույն այս ռոտոնդածե, եռահարկ կոմպոզիցիան իր որոշակի դրսեւորումն է գտնում 4-րդ դարի սկզբում Կոնստանդինոս կայսեր մոր՝ Յեղիմեի կողմից Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված տաճարում»:

Բանն այն է, որ մինչեւ օրս հայտնի չէ, թե Քրիստոսի գերեզմանի վրա ինչ շինություն է եղել, թե այն ինչ ձև է ունեցել: Գոյություն չունի հնագույն որեւէ քանդակ (թեկուզ եւ «փղոսկրյա կազմի վրա»), մանրակերտ կամ մանրանկար եւ ոչ էլ նկարագրություն, որ արտահայտեր Քրիստոսի գերեզմանի շինության ճշգրիտ ձևը: Առկա են միայն ու միայն ենթադրություններ, եւ այդ աննյութական հիմքի վրա մեր ժամանակներում որոշ հետազոտողների կողմից ստեղծված վերակազմություններ: Նույնիսկ փղոսկրյա կազմերի վրա երեւացող, որպես Քրիստոսի գերեզման ենթադրվող շինությունները միմյանցից բոլորովին տարբեր հորինվածքներ ունեն: Եվ դա բնական է, քանի որ փղոսկրյա կազմեր պատրաստողները, տեսած չլինելով գերեզմանի վրա որեւէ շինություն, պատկերել են իրենց ենթադրած կամ նախորդներից ավանդաբար իրենց փոխանցված ձևով: Բայց իրականում Քրիստոսի գերեզմանի վրա իրական շենք եղե՞լ է, թե՞ ոչ: Ընդհանրապես հայտնի է, որ շարունակաբար գործող, կարելուր տաճարները վնասվելուց հետո միշտ էլ նորոգվել, հարատեւել են: Եթե Քրիստոսի գերեզմանի վրա հատուկ շենք

եղած լինելը, նա չէր կարող քրիստոնեության կենտրոն Երուսաղեմում անհետք մնալ, տեսքով մոռացվել:

Նոյ ճահապետի եւ նրա տապանի հետ կապված լեգենդի պատկերումը, ըստ երեւոյթին, եզակի երեւոյթ չէ, այն հանդիպում է տարբեր ժողովուրդների արվեստի եւ պատմության նյութերում: Եվ ահա դրանցում բացակայում է Սեն-Շապելի բարձրաքանդակում առկա շինությունը: Եթե Քրիստոսի գերեզմանի վրա շինություն եղած լինելու նրա տեսքը՝ տարածում գտած, ապա տվյալ լեգենդի պատկերների բոլոր տարբերակներում դա կլինէր: Իրականում ոչ միայն Սեն-Շապելի քանդակներում, այլեւ մանրանկարչության շատ եւ շատ երկերում միջավայրը ստեղծված է տարբեր հորինվածքների շենքերի առկայությամբ: Դրանք վաղ միջնադարում կառուցված նշանավոր սրբավայրերի եւ զանազան շինությունների վերարտադրություններ են: Այս վերջիններիս պատկերներում կան նաեւ այնպիսիները, որոնք բազմաձև են, ճակտոնով, երբեմն՝ սյունազարդ: Դրանք վերացական չեն, կոնկրետ օբյեկտների յուրօրինակ մեկնաբանություններ են:

...Ահա եւ պարզվում է, որ ... Սեն-Շապելի քանդակներում պատկերված շինությունը հորինվածքով կոնկրետ է, հավաստի վերարտադրություն է իրական շինության: Նրանում ձեւերն արտահայտում են որոշակի ոճ: Այդ ոճը ոչ եզրագծային է, ոչ հունական կամ հռոմեական, նույնիսկ բյուզանդական-սիրիական չէ: Առանց մեզ համարձակություն վերագրելու կարող ենք ասել, թե այդ պատկերում դրոշմված շինությունը հայ ճարտարապետության հուշարձան է: Զվարթնոցից առաջ այդ հորինվածքով, այդպիսի արտաքին հարդարանքով աշխարհում մի այլ շինություն գոյություն չունի:

Արդ, Սեն-Շապելի հարթաքանդակների նշանակության մասին՝ Զվարթնոցի ընդհանուր հորինվածքի ձեւերի ճշգրտման առումով: Մեր նախորդ հրապարակումներում գրել էինք. «Ի վերջո, հիշյալ քանդակապատկերն ասում է, որ Զվարթնոցը եղել է եռաստիճան, եւ որ բոլոր աստիճանների հիմքում ունեցել է բոլորակ ձեւ ...»: Հարցի ճարտարապետական կողմն այս է, որ մինչեւ հիմա պահպանում է իր այժմեականությունը:

Ամենահետաքրքիր եւ նշանակությամբ կարելուրն այն է, որ Սեն-Շապելի հարթաքանդակների նորովի մեկնաբանման վիճարկողների բերած օրինակները, հակառակ իրենց ցանկության, ուղղված են իրենց թեզերի դեմ եւ միաժամանակ զգալի նպաստ են բորանայանական վերակազմության հավաստիության, քանի որ որպես օրինակ բերվող բոլոր շինություններում բոլոր աստիճանները իրենց հիմքում բոլորակ են:

Ճարտարապետական հորինվածքային տրամաբանությամբ ճիշտը, բնականը սա է, հակառակը չկա եւ լինելու բան չէ:

Ավելի տրամաբանական է մտածել, որ Նոյն իր տապանով քրիեղեղից փրկում էր ոչ թե «երկինք համբարձված Քրիստոսի երկրային գերեզմանը», այլ «Աստծո տունը», որ քրիեղեղից հետո պիտի գոյատևեր եւ ծառայեր ըստ նշանակության:

Ամբողջ միջնադարի ընթացքում Հայաստանը կապված է եղել ինչպես հարեւանների, այնպես էլ Արեւելքի ու Արեւմուտքի հեռավոր երկրների հետ: Այս պայմաններում կարելի է տարակուսել, թե կարող էր Զվարթնոցի պատկերը հայտնվել Ֆրանսիայում: Եվ վեր-



ջապես, ի՞նչը պիտի խանգարեր, որ 7-10-րդ դարերում մեծ հռչակ ստացած աննախադեպ կոթողի յուրօրինակ հորինվածքն իր մանրամասներով հայտնի դառնար Ֆրանսիայում, ու արձագանքը հարատևեր մինչև 13-րդ դար:

...Սեն-Շապելի քանդակների եւ Զվարթնոցի առնչությունների միանգամայն հավաստի լինելը մեծ թվով մասնագետների մոտ որել է կասկած չի հարուցում, ուստի կարծում են, որ Հայկական ՍՍՀ Պետշինի հուշարձանների նորոգման վարչությունը հնարավոր կհամարի Զվարթնոցի թանգարանի ցուցադրություն վերադարձնել Սեն-Շապելի բարձրաքանդակի լուսանկարը, թերեւս տեղ կհատկացվի նաեւ մյուս երկու քանդակների, ինչպես եւ Սեն-Սավենի որմնանկարի լուսանկարներին:

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ
ճարտարապետության դոկտոր
1979թ.

